Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
22	Հունվար	2019 թ.	Ա	8281898253
[4] Մատակարարման ամսաթիվ			Ճշգրտվող հաշվի	
22	Հունվար	2019 թ.	Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 8 9 1 2 8
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն — N 900011474286
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆ 13Ա
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	15861818 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.3	20	6566.67	39400
Ընդամենը						32833.3		6566.67	39400

Դուրս գրող` PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)
պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)

22/01/2019 11:05:28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

19 - ը նոյեմբերի, 2018թ. Ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչի պաշտոնակատար Բ.Ա.Չիլինգարյանս, վերանայելով վարույթիս թիվ 15861818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Արամ Գուրգենի Սարգսյանն այն մասին, որ նախկին կինը՝ Լիլիթ Սամվելի Կիրակոսյանը, խոչընդոտել է իր, ինչպես նաև մոր՝ Պայծառ Մարտիրոսի Քալանթարյանի և իր աղջկա՝ Դիանա Արամի Սարգսյանի միջև դատական կարգով սահմանված տեսակցության իրականացումը:

Դեպքի առթիվ 2018թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով հարուցվել է թիվ 15861818 քրեական գործը:

24.09.2018թ. քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին և կատարվել նախաքննություն:

Նախաքննությամբ պարզվել է, որ Լիլիթ Սամվելի Կիրակոսյանը հանդիսանում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի ոստիկան:

2018 թվականի նոյեմբերի 9-ից թիվ 15861818 քրեական գործի նախաքննությունն իրականացվում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

Նախաքննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 29.09.2015թ. տրված թիվ ԵԿԴ/0091/02/14 կատարողական թերթի համաձայն սահմանվել է 22.12.2010թ. ծնված Դիանա Արամի Սարգսյանի հետ նրա հոր՝ Արամ Գուրգենի Սարգսյանի և տատիկի՝ Պայծառ Մարտիրոսի Քալանթարյանի շփման կարգ՝ տեսակցության օրեր նշանակելով յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի, շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 15:00-20:00-ը տնից դուրս հասցեում՝ մոր մասնակցությունը պարտադիր լինելը կողմերի համաձայնությամբ: Վերոգրյալի հիման վրա հարկադիր կատարումն ապահովող ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնում 01.10.2015թ. հարուցված կատարողական վարույթի շրջանակներում կազմակերպվել են մի շարք տեսակցություններ, այդ կապակցությամբ կազմվել արձանագրություններ, որոնց համաձայն մի շարք տեսակցությունների դեպքում Դիանա Սարգսյանը հուզվել է, լաց եղել, ցանկություն հայտնել տուն գնալ:

Կատարողական գործողություններին ներգրավված «Ժեստ» հոգեբանական խորհրդատվության և մանկական զարգացման կենտրոնի իրավաբան-հոգեբանների կողմից 05.04.2016թ. տրված եզրակացության համաձայն՝ ելնելով երեխայի մոտ առկա դեպրեսիայից, մարդկանց հանդեպ անվստահության վառ, իրեն օգտագործված լինելու զգացումից, մոր և հոր բացասաբար հարաբերություններից, հոր՝ ԴԱՀԿԾ «Հեքիաթային տնակում» վերջին հանդիպման ընթացքում երեխայի հանդեպ թույլ տված ագրեսիվ վարքային դրսևորումներից, երեխային անհրաժեշտ է տալ դադար՝ կասեցնելով հոր հետ հանդիպումները:

Հիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ Լիլիթ Կիրակոսյանը հրաժարվել է Դիանա Սարգսյանին 17.08.2016թ. ներկայացնել տեսակցության՝ պատճառաբանելով, որ երեխան ծանր է տանում նմանատիպ հանդիպումները և հանդիպումներից հետո դժվար է լինում նրան հանգստացնել:

Հարկադիր կատարողի կողմից 17.08.2016թ. կայացվել է «պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշում, որով Լիլիթ Կիրակոսյանին պարտավորեցվել է ապահովել Դիանա Սարգսյանի հետ հոր և տատիկի շփման կարգը:

30.09.2016թ. հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է մուտքագրվել թիվ ՎԴ/5661/05/16 վարչական գործով կայացված՝ «հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը, համաձայն որի՝ ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել Ծառայության՝ 17.08.2016թ. կայացված որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին Լիլիթ Կիրակոսյանի հայցը: Հիշյալ հիմքով 28.09.2016թ. կատարողական վարույթը կասեցվել է:

31.08.2017թ. պահանջատեր Արամ Սարգսյանը դիմում է ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու խնդրանքով, որի հիմքով 05.09.2017թ. որոշում է կայացվել թիվ 01421078 կատարողական վարույթն ավարտելու մասին:

26.02.2018թ. Արամ Սարգսյանը կրկին կատարման է ներկայացրել թիվ ԵԿԴ/0091/02/14 կատարողական թերթը, որի հիման վրա 27.02.2018թ. որոշում է կայացվել կատարողական վարույթը վերսկսելու մասին:

Հարկադիր կատարողի կողմից իրականացված կատարողական գործողությունների ընթացքում պարտապանին ուղարկվել են տեսակցություն կազմակերպելու վերաբերյալ համապատասխան ծանուցագրեր, սակայն պարտապան Լիլիթ Կիրակոսյանը չի ներկայացել Ծառայություն և չի ապահովել երեխայի ներկայությունը:

Նախաքննության ընթացքում Լիլիթ Կիրակոսյանը ցուցմունք է տվել և հայտնել, որ ինքը երբևէ չի հրաժարվել ու չի հրաժարվում դատական ակտի պահանջը կատարելուց, ավելին՝ նախկինում պատշաճ ձևով ապահովել է հոր և տատիկի հետ երեխայի տեսակցությունները, սակայն ընթացքում իրավիճակ է փոխվել, հոր հետ յուրաքանչյուր հանդիպումից հետո երեխան հայտնվել է խորը հոգեբանական վիճակում, Արամն իր վարքագծով բացասաբար է անդրադառնում երեխայի հոգեկան վիճակի վրա: Հայտնել է, որ ամեն հանդիպման ժամանակ Արամն իրեն պահել է ավելի վատ ու ավելի ագրեսիվ, երեխայի հետ եղել է կոպիտ, անընդհատ հրահրել է վիճաբանություն և նույնիսկ ԴԱՀԿ աշխատակցների նկատմամբ իրեն պահել է ագրեսիվ: Ամեն հաջորդ հանդիպման ժամանակ Դիանան ավելի ու ավելի է լարվել, լաց եղել ու խնդրել տուն գնալ: Տեսնելով, որ Արամի հետ հանդիպումները երեխայի վրա բացասաբար է անդրադառնում, հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցները հրավիրել են փորձագետների, ովքեր կատարելով հետազոտություններ՝ 05.04.2016թ. եզրակացություն են տվել այն մասին, որ երեխային անհրաժեշտ է տալ դադար՝ կասեցնելով հոր հետ հանդիպումները: Այդ եզրակացության հիման վրա ինքը դիմել է նաև դատարան՝ հոր հետ Դիանայի տեսակցությունները մինչ 10 տարին լրանալը սահմանափակելու միջոցությամբ, որտեղ նույնիսկ նշանակվել է դատահոգեբանական փորձաքննություն, և մինչև նշանակված դատահոգեբանական փորձաքննության եզրակացության հիման վրա վերջնական դատական ակտ չլինի, երեխային թույլ չի տա հանդիպել հորը, քանի որ երեխան նույնպես չի ուզում հանդիպել նրան:

Նկատի ունենալով, որ անչափահաս Դիանա Արամի Սարգսյանի հոգեկան վիճակի և գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու նպատակով անհրաժեշտ է դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 247-րդ, 249-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 15861818 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի փորձագետներին:

2. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով, ինչպես նաև նախաքննության տվյալները հրապարակելու համար 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

3. Փորձագետի պահանջով տրամադրել քրեական գործը կամ քրեական գործից նյութեր, փորձաքննության կատարման համար անհրաժեշտ այլ նյութեր, իսկ հոգեկան վիճակի հետազոտման անհրաժեշտության դեպքում՝ փորձաքննության ներկայացնել միջնորդության մեջ նշված դատավարական սուբյեկտներին:

4. Փորձագետի լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

- Հոգեբանական ինչպիսի վիճակում է գտնվում անչափահաս, 22.10.2010թ. ծնված Դիանա Արամի Սարգսյանը:
- Հոգեբանական ինչպիսի կախվածություն ունի Դիանա Սարգսյանը ծնողներից յուրաքանչյուրի հետ:
- Անչափահաս Դիանա Արամի Սարգսյանի հոգեկան ներաշխարհի վրա ինչպիսի հոգեբանական կամ այլ ազդեցություն կարող է ունենալ շփումը հոր և հայրական տատիկի հետ:
- Նպաստում է արդյոք անչափահաս Դիանա Արամի Սարգսյանի լիարժեք զարգացմանը հոր և տատիկի հետ շփման սահմանափակումը:
- Անհրաժեշտություն կա արդյոք սահմանափակել անչափահաս Դիանա Սարգսյանի շփումները հոր և տատիկի հետ:

5. Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատական հոգեբանության բնագավառի փորձագետի իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
ՀԿԳ ավագ քննիչի պաշտոնակատար՝ ***Բ.Չիլինգարյան***